Բարձր բարեծնունդ գերազնիւ էմին աղայ,
իմ վաղեմի հաւատարիմ բարեկամ։

Երկոքին ախորժ թուղթ ձեր գրեցեալն ի 1788 և ի յունվարի 10, մի օրինակ, մինն ի վերայ Եւրոպիու, իսկ միւսն ի վերայ Ջուղայու ի միասին յայսմ ամի ի յունվարի 15, ի յերկիրն մալդաւանացուց և ի քաղաքն Եաշ մեծաւ պատուով ընկալաք, և բոլոր դիտմանցդ տեղեկացաք, և ի վերայ ցանկալի առողջութեան ձերոյ տեղեկացաք։ Ահա աստէն կամիմ զրստուգութիւն ի քէն զրեցեալ լրոցն պարզապէս և երկայնօրէն գրել վեհանձնութեան քում մինչև ցայժմ։

1780 թուոջն մեք ի Պետրբոլք դիմեցաք վասն օժ[անդակ]ութեան ի յաղնիւ աղայ Յովաննիսէն Եղիազարեան[1], կառուցեալ եկեղեցւոյն[2], անդէն գդաք զընօրհս ծանօթանալ ընդ մեզ իշխանին, որոյ անունն կոչի քնէազ Գրիգոր Ալէքսանդրովիչ Պոտեմկին[3], նման որոյ ի յամենայն դարս ոչ է եղեալ, երևելի ոք ի դրան ուրուք թագաւորի, մինչև ցայսօր ժամանակ բուռն զօրութեամբ, արդեամբ և բանիւ։ Եւ ի ձեռն շնորհաց սորա արժանաւորութիւն ընկալաք և մեծ կայսէրուհւոյ հանդէպն կալ և վայելել զմայրական ողորմութիւն նորա, և զզանազան ողորմութիւնս ընկալնուլ, եղելոցն Ղռիմու ազգին մերոյ, զորս բնակեցուցաք ի վերայ Դօն գետոյն հանդէպ Ազովու և զքաղաքն անուանեցաք երկրորդ և կամ Նոր Նախիջևան, որոյ հիմն մեծամիտ կոնդակիւ արկաք, այժմ օրրստօրէ պայծառանան անդ ժողովուրդք մեր և զբոլոր զօրութիւն մեր ի գործ արկանեմք բարեկարգել զքաղաքն, պայծառացուցանել զժողովուրդն, և զմայրեցուցանել զհեռաւոր ազգս մեր՝ հաստատմամբ դպրոցաց և տպարանաց, որպէս և լսէք ի թղթոց և ի մէնջ առաքեցեալ տէր Ստեփան աւաք քահանայէն մեզմէ[4]։

Սոյն մեծ իշխանս, ունելով գութ ի վերայ ազգիս մերոյ, ի նոյն 1780 թուին կամեցաւ զթես տարածել ի վերայ Հայաստանեաց՝ ի փրկել զնոսա ի յանտանելի լծոյն, որում դու ցանկայիր։ Ի մէջ բանից ասացեալ եղև նմա ի մէնջ ևս ի աղնիւ աղայ Յովաննիսէն Եղիազարեան զքէն և զջանից քոց և այլն։ Նա իսկոյն խանդակաթ սիրով հրամայեաց աղայ Յովաննիսին գրել քեզ՝ շուտով գալ ասա, կարգել ի գործն և առաքել ի Հայաստան մեծ պատրաստութեամբ ենարալ Սուվորովին[5]։

Աղայ Յովհաննէսն զգիր իւր ըստ բարձրագոյն հրամանին նորին պայծառութեան գրեալ առաքեաց ի Հաշտարխան առ գուբեռնատորն, ձեռամբ Դիլանչեան աղայ Մինասին[6], զյատուկ սուրհանդակաւ առաքեսցէն ի Ջուղայ՝ հրաւիրել զքեզ։ Նոքա անտի գրեցին, թէ էմին աղայն ի Տէր է փոխեալ, զի չէ կենդանի։ Կիրն յետ էին դարձուցեալ։ Եղև մեծ իշխանին և մեզ տրտմութիւն մեծ վասն անբախտ վիճակի ազգին մերոյ։ Զկնի այնմ ի 1782[7] ամին կրկին նորոգեցաւ բանն և զՎիրս ի միաբանութիւն ընկալան, և ի Վրացն խնդիրք եղեն և բազում թղթոց երթևեկութիւն առ մէլիքսն և առ այլս, որոց արժանաւոր պատասխանսն ինչ ոչ ընկալան, և ի Վրացն զզուեցան, անդէն զզօրս իւրեանց յետս կոչեցին ի յերկրէն Վրաց։ Յայսմ պատճառէ վնասեցան և երկուքին մէլիքքն մեր՝ որդիքն մէլիք Ադամայ և Յովսէփի, մէլիք Մէջլումն և Ապուլն, և այժմ տարտագիր ի Գանջայ են, զի խանն նոցա իմացեալ զմիտս նոցա միանալ ընդ Ռուսաց, կամեցաւ սպանանել։ Նոքա ի Թիֆլիզ փախեան, ապա մինչև ցայժմ ոչ ի նոցանէ և ոչ այլոց օգնութիւն ոչ գտին։

Եւ մինչ այս բան նորոգեցաւ և մեք ի մէջ բանից էաք լուեալ մեր զսուտ գոլն մեռելութեան քո, գրեցաք ի Ջուղայ, զի յայտնեսցէն քեզ զվերոյ գրեցեալ դիտմունս, յայնժամ քոյ ի Հնդիկս գնացեալ գոլով, կրկին տրտմութիւն և տարակուսանք պաշարեաց մեզ։ Եթէ դու ի միջոցի այնմիկ լինիցէիր ի կողմունս այս, թարց իմիք երկբայութեան, փրկութիւն լինելոց էր ազգին մերոյ, առաջնորդութեամբ քով և խելամուտ հանճարովդ։ Յետ այսօրիկ բացաւ պատերազմն ընդդէմ Թուրքաց, այս ամենայն ի մոռացումն եղև տուեալ և այժմ մեծաւ սաստկութեամբ կան ընդդէմ Թուրքաց։ Վասն մեծի գթոյ իշ-